

Մեր աղքարնակութեան ստուար մասի ապրուստի համար հողատիրական խճառած հարցը առաջնակարգ կարևորութիւն ունի, մինչդեռ նոյն իսկ վարչական շրջաններում այդ հարցի շատ կողմերը գեռ ևս պարզուած չեն: Տեղական հանգամանքներին լաւ ծանօթ մանանց կողմից այդ հարցերի հրապարակախօսական լուսաբանութիւնը մայրաքաղաքների մամուլի մէջ մեծ նշանակութիւն ունի և ցանկալի է, որ շատ յաճախ շօշափուեն այդ խնդիրները ազդեցիկ հրատարակութիւնների մէջ:

Թէև մեր գիւղացիների տնտեսական գրութեան մասին առատ նիւթեր հաւաքուել են գեռ ութսունական թուականներին (Матеріалы по изсл. экон. быта гос. крест. Закавказск. края), բայց այդ բազմահատոր հետազօտութիւնները մատչելի են ընթերցողների շատ նեղ շրջանին: Իշխ. Թումանօվի գիրքը միայն մասամբ կարող է լրացնել այդ պակասը, շօշափելով համառոտ ձևով հարցի միայն մի քանի կողմերը: Շատ ցանկալի է, որ ներկայումս, երբ ծրագրուում է մեր գիւղացիների հողային գրութեան վերջնական օրէնսդրական կանոնաւորումը, մամուլը աշխատի բազմակողմանի քննութեամբ պարզել մեր երկրի տնտեսական կեանքի այդ հիմնական կողմը, մատնանիշ անելով այն ուղղութիւնը այդ խնդրում, որ աւելի շատ կ'ապահովի երկրագործ մասսայի բարեկեցութիւնը: Անշուշտ, աւելի նպատակայարժար է մայրաքաղաքների ազդեցիկ հրատարակութիւնների մէջ («Ենտի. Եվրոպ», «С. Пет. Вѣд.» և այլն) արծարծել այդ հարցերը: Իշխ. Թումանօվի այս գրքից կարելի է եզրակացնել, որ նրա բռնած ուղղութիւնը հողային հարցում շատ համակրելի է և արդարաժիտ: ուստի ցանկալի է, որ նա աւելի եւս մեծ եռանդով շարունակի իր հրապարակախօսական օգնութիւնը մեր խեղճ գիւղացիներին:

Լ. Ա.

17) ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵՑՆԵՐՆ Առողջապահական գրեյլեները

ԲԺ. Ա. Բուդուղեանը այն հազուագիւտ հայ գիտնական-ներից է, որոնք ապրելով հեռաւոր հիւսիսում, մայրաքաղաքներում, չեն մոռանուում իրանց պարտը—գոնէ գրչով մի բան անել իրանց հայրենակիցների համար: Նրա գործունէութիւնը մարմնացած հերքումն է ժողովրդի մէջ տարածուած այն զար-

մանալի կարծիքին, թէ մի բժիշկ, որ գրական աշխատութիւններով է զբաղուած, որ գրքոյկներ է գրում, այդ բժիշկը լաւ բժիշկ չէ. որովհետեւ լաւ բժիշկը, ժողովրդի հասկացողութեամբ, նա է, ով կզգիացած է ապրում, ով իսկի հայ թերթի երեսն էլ չէ տեսնում, ու միշտ փակուած է լինում իր գրասենեակում, թէկուզ այնտեղ թղթախաղով պարապէր ամբողջ գիշերներ։

Էլ չեն մտածում, թէ ախար չէ որ մի գիրք զրելիս, մի յօդուած շարադրելիս, բժիշկը պէտք է մօտ ծանօթանայ այդ խնդրի հետ, ուսումնասիրի նրան ամեն կողմից, անքուն զիշերներ անցկացնի, քրքրի իր գրուածքին վերաբերեալ գրականութիւնը, հետեաբար աւելի ևս զարգանայ, աւելի ևս հմտանայ իր գիտութեան մէջ։

Բժ. Ա. Բուդուղեանը կենդանի ապացոյց է այն բանին, որ կարելի է համ հմտու բժիշկ լինել, և «ալրակտիկայով» պարապել, համ էլ աշխատել հասարակութեան, ժողովրդի օգտին։

Եւ նրա ցոյց տուած գործունէութիւնը արդէն պատկառելի ծաւալ է ստանում և ապահովացրել է նրան լայն ժողովրդականութիւն։

Բժ. Բուդուղեանը նպատակ է գրել իրան՝ ժողովրդականացնել հայերի մէջ առողջապահական գիտութիւնները և այդ նպատակով արդէն լոյս է ընծայել մի շարք գրքոյկներ, որոնք իրանց գեղեցիկ արտաքինով ու հետաքրքիր պարունակութեամբ արժանի են ամենալայն տարածման ժողովրդի մէջ։

Բժ. Բուդուղեանի գրքոյկները լոկ չոր ու ցամաք բժշկական—առողջապահական ձեռնարկներ չեն, այլ ամեն մի առողջապահական խորհուրդ այդտեղ լուսաբանուած է ֆիլիսոփայական և հասարակական խնդիրների մասին գոյութիւն ունեցող նորագոյն հայեցքներով։ Այս է պատճառը, որ նրա գրերի մէջ ամեն երեսի վրայ շօշափուամ են հասարակական խնդիրներ և հոգեբանական դիտումներ։ Այսպիսի գրքերի ընթերցանութիւնը օգտաէտ է ընդհանուր զարգացման տեսակէտից, թէև երեսն էլ նա կարող է վնասել գործնական առողջապահական գաղափարների տարածուելուն։ Այս է յարգելի բժշկի գրելու ձեւը։ Շօշափած խնդիրները չափազանց հետաքրքրական են, ու կարենոր։ Բաւական է յիշել մի քանի վերնագիրներ։ Առաջին օգնութիւն մինչեւ բժշկի գալը. Վարակիչ նիւանդութիւններ. Ի՞նչ է սիթիլիար. Ի՞նչ է ծուժկալուրիւնը. Ի՞նչ է անառակուրիւնը. Մեր նեարդերը. Առողջ հոգի առողջ մարմնի մէջ։

Ահա մի շարք խնդիրներ, որոնք կենսական նշանակութիւն

ունեն և որոնցով հետաքրքրում է ժողովուրդը, իսկ այդ ապացուցում է նրանով, որ այդ գրքերը համարեա բոլորը արդէն սպառուած են:

Այդ գրուածքները ակներև են անում հեղինակի մէջ մեծ գիտական պաշար և ընդհանուր լայն զարգացումն. իսկ դըրանք այնպիսի յատկութիւններ են, որոնք անհրաժեշտ են ժողովրդի հետ խօսելու համար:

Պ. Բուղուղեանը աշխատում է իր գրքերն ընթերցանելի անել ամենքին, և ճշմարիտ որ իրանց բնաբանով ու շարադրութեամբ նրանք շատ հեշտ ընթերցանելի են և հանրաժառչելի. այդ է երեխ նրանց արագ սպառուելու գաղտնիքը: Սակայն պէտք է ասել, որ նրանցից մի քանիսը անմատչելի կը լինեն բուն ժողովրդի համար (ես ենթադրում եմ՝ գիւղացի, բանուոր դասակարգը), որին հարկաւոր է տալ որոշ ու պատգամների պէտք պարզ խրաներ և խօսքը սահմանափակել միայն շօշափած հարցով: Ժողովրդը չէ կարող ընդհանրացնել առողջապահական գիտելիքները և անընդունակ է ըմբռնել նրանց հասարակական նշանակութիւնը. նրան պէտք է ասել. «այս բանը օգուտ է, իսկ միւսը ֆեաս, որովհետե»... Մի ուրիշ անհրաժեշտ պայմանն էլ այն է, որ ժողովրդին պէտք է տալ այնպիսի մտքեր, որոնք լոկ անվիճելի հշմարտութիւններ են և ոչ թէ պայմանական, այլապէս նաև չի հաւատայ մեզ:

Պ. Բուղուղեանի գրքերից մի քանիսը համապատասխան են այս պահանջներին, իսկ մեծագոյն մասը ընթերցանութեան պատուական նիւթ են մատակարարում աւելի զարգացած զասակարգի համար: Դժուար կը լինէր մի առ մի քըննազատել նրա 13 գրքոյիները. բայց վերցնենք նրա վերջի գրքոյիկը Գեղձախոսը (Յօլուցիա): Այս հասարակ հիւանդութեան մասին բաւական կը լինէր մի քանի երես բան գրել: Բայց հեղինակը չէ բաւականանում հիւանդութեան լոկ չոր ու ցամաք նկարագրութիւնով, այլ նրան համեմել է հետաքրքրական տեղեկութիւններով և, օգտուելով առիթից, մի շարք առողջապահական դիտումներ է արել. օրինակ, մանկան սննդատութեան, օդի, կերակրի նշանակութեան, լողարանների մասին եւ այլն:

Բայց քանի որ մարդկացին գործը չէ կարող կատարեալ լինել, պ. Բուղուղեանին կարելի է մի քանի կշտամբանք անել, գոնէ լեզուի վերաբերմամբ:

Լեզուն չունի այն պարզութիւնը, «անարուեստութիւնը», որ ժողովրդական գրքերի համար այնչափ մեծ կարևորութիւն ունի, նրա գրքերի մէջ կարելի է յաճախ հանդիպել այնպիսի նախադասութիւնների, որոնք շատ դժուար հասկանալի են նոյն

իսկ ինտելիգենտի համար: Ցանկալի է, որ հեղինակը, կամ աւելի ծիշտ ասած նրա թարգմանողը, խուսափի գրաբար ոճերից ու երկար նախադասութիւններից և այնպիսի դարձուածքներից, որոնք պահանջում են ընթերցողից ուշքի մեծ լարումն ու ժիգ: Մենք այս բարեկամական խորհուրդը կը տանք յարգելի հեղինակին, մի և նոյն ժամանակ անկեղծօրէն ու սրտանց ողջունելով նրա հանրօգուա գործի բարի սկզբնաւորութիւնը:

Պ. Բուգուղեանը ունի պատրաստութիւն ու եռանդ, ունի նաև սէր գէպի այս գործը. ցանկանում ենք, որ նա մնայ այդ շաւզի վրայ և տոկունութեամբ, առանց վհատելու շարունակէ:

Ի հարկէ մի մեծ բան չէ մեր ամեն մէկիս արածը, և մեր հատորիկներով անկարող ենք մի անգամից ցրել այն անթափանցելի խաւարը, որ պատել է հայ ժողովուրդը. բայց մենք շնորհապարտ պիտի լինենք այն անձաց, որոնք ճգնում են իրանց ոյժերի չափով այս թանձր՝ վարագոյրի գոնէ մի փոքր մասը բարձրացնել:

Այդպիսի անձերից մէկը բժ. Բուգուղեանն է:

ԲԺՊ. Վ. ԱՐԾՐՈՒԽԵԿ

18) ԶԵՅԹՈՒՆՅԻ. — ԶԵՅՐՈՒՆԻ անցեալէն և ներկայէն. Ս. մասն.
1900 թ. Վիեննա:

Այս գրքոյկում խօսւում է գլխաւորապէս Զէյթունի անցեալի, մօտաւորապէս երկու դարի պատմութեան մասին և վերջանում 1890 թուի գէպքերով: Սակայն այդ լուրջ, քննուած, փաստերով ու վկայութիւններով մի պատմութիւն չէ, այլ հեղինակը տալիս է աւանդութիւնների և աշուղական երգերի մի հաւաքածու, որոնցից եւ հետեւցնում է, և կազմում իր պատմութիւնը:

Այդ գրքոյկը իր բովանդակութեամբ ոչ միայն չէ լրցնում հայոց գրականութեան մէջ զգալի պակասը Զէյթունի պատմութեան նկատմամբ, այլ և շփոթում է այն, ինչ վերաբերում է նրա անցեալին:

Այսպէս, գրքոյկի երես 15-ում «Մուտք քրիստոնէութեան ի Զէյթուն», բոլորովին հակառակ է պատմութեան և եղելութիւններին: Առաջին գարում, երբ Քրիստոսի աշակերտները գնում էին քարոզելու Եւրոպայի և Ասիայի զանազան երկիրները, կիլիկիայում կամ, մասնաւորելով, Զէյթունում դեռ ևս հայեր չը կային, հայկական գիւղեր գոյութիւն չունեին, որպէս զի գաւառի այս կամ այն մասը կրէր հայ անուններ, ինչ-